

ՄԱՏԹԵՈՍ ԿԵԹՈՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹԸ Ն. Կ. Բ.
ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԻՒՑԻ ՏԵՐ ԳԵՐԻՒԵԼ ՊԱՏ-
ԿԱՆԵՍՆՑԻ ՄԱՍԻՆ

Զերդ Կայսերական բարձրութիւն
Նոր-Նախիջևանի Հայոց քահանայ Տէր-Գաբրիէլ Պատ-
կանեանցը, որ չարակամ մարդկանց ամբաստանութեամբ են-
թարկուած էր քրէական դատապարտութեան այն բանի հա-
մար, որ իբրև թէ նա կաշառել էր կասկածաւոր մարդկանց
Նախիջևանի քաղաքագլուխ Խալիբեանին սպանելու նպատակով,
այս արդէն եօթ տարի է, որ կալանաւորուած է և արգելուած։
Թէև քննութեամբ ու դատավարութեան բոլոր ինստան-
ցիաներով այդ ամբաստանութիւնը չի ապացուցուել, բայց հա-
կառակորդների չարաչար ազդեցութիւնը կարողացել է անել
այն, որ դժբաղդ դատապարտեալը չէ ենթարկուել իւր եօթնա-
մեայ կալանաւորութեան միջոցում հրատարակուած երեք մա-
նիքեստից և ոչ մէկի ներգործութեան։

Կայսերական խորհրդարանը վճռել է թողնել Պատկա-
նեանցին կասկածանքի տակ, ազատել արգելանքից, առանց
կարգնկէց անելու, սակայն թագաւոր-Կայսրը բարեհաճել է
մակարգել՝ «Աւելի լաւ է նորան կարգազուրկ անել, քան թող-
նել կասկածանքի տակ»։

Խոնարհելով կայսեր սրբազն կամքի առաջ, ես պատկա-
ռանքով ընդունում եմ այդ վճիռը, բայց ստիպուած եմ հա-
ղորդելու, որ այդ բարձրագոյն վճռի ի կատար ածելու գոր-
ծում եղած է զեղծում և շեղում Հայոց եկեղեցու կանոններից։

Այդ կանոններին համաձայն կարգընկեցութիւնը պէտք է
տեղի ունենայ ոչ այլապէս, քան կարգընկէց լինելու դատա-
պարտուած քահանային ձեռնադրող եպիսկոպոսի կամ նորան
յաշորդողի ձեռքով, և այն անպատճառ եկեղեցում, սահմանուած
ծիսակատարութեամբ։ Արդ, Պատկանեանց քահանայի ձեռնա-
դրողն եղել է ներսէս արքեպիսկոպոսը, որ յիտոյ ընտրուել է

պատրիարք-կաթողիկոս և որին յաջորդել եմ ես: Պատկանեանցը կարգընկեց է եղել 1860 թուին և կարգն առնողն եղել եմ ոչ ես և մինչև իսկ ոչ եպիսկոպոս, այլ նորա նման քահանաներ, նախիջևանի Հոգեոր կառավարութեան անդամները, որոնք իրաւունք չունէին ոչ ձեռնադրելու, ոչ էլ կարգ առնելու, և այն էլ ոչ եկեղեցում, այլ հոգեոր կառավարութեան մէջ, առանց սահմանուած ծէսերի:

Ակներե է, որ այդ զեղծումն առաջ է եկել Պատկանեանցի ուրախացած հակառակորդների շտապելուց, որոնք առլցուած ատելութեամբ դէպի նա, չեն շտացել իշճուկ ծերունու այդ թշուառութեամբ: Ազատութիւն ստանալուց յետոյ, նա բաց է անում նախիջևանում մի փոքրիկ մասնաւոր պանսիօն մանուկների դաստիարակութեան համար և դորանով հալթայթում է իւր և իւր ընտանիքի աւուր պարէնը, բայց անխիղն հակառակորդների ատելութիւնը հնար է գտնում իշելու նորանից և այդ վերջին միջոցը: Մի տարուց նորա կազմում և ուղարկում են ուր հարկն է քսութեան մի թուղթ, որով յայտնում են, թէ Պատկանեանցը խովութիւն է սերմանում ժողովրդի մէջ և որ նորա մնալը նախիջևանում մնասակար է քաղաքին:

Այդ քսութեան վերայ քաղաքացիական իշխանութիւնը աքսորում է նորան վեհատկա, որտեղից յետոյ փոխադրում է կոստրամա, և այդ ժամանակից սկսած՝ ամբաստանութեան թշուառ զոհը ապրում է իւր հազուագիւտ քանքարի գնահատողների: և աշակերտների հասցրած օգնութեամբ, հեռու իւր ազգականներից, անծանօթ մարդկանց մէջ, զուրկ իւր դաւանութեամբ խոստովանուելու և հաղորդուելու հարաւորութիւնից, իւր ցաւալի վախճանին սպասելու գրութեան և իւր դաւանութեան չպատկանող քահանայի ձեռքով թաղուելու վիճակի մէջ:

Ընդարձակ գիտութիւնների տէր լինելով, կատարելապէս իմանալով հայ և ուսւ լեզուները, քազմաթիւ հանրօգուտ գըրուածների հեղինակ հանդիսացած լինելով, օժտուած արտաքոյ կարգի ճարտարախօսութեան ընդունակութեամբ և իրեւ քանաստեղծ ու գրող հոչակուած լինելով հանդերձ-նա նոյն ժամանակ իւր ներկայ վիճակի մէջ զրկուած է ընդհանրութեան օգուտ բերելու կարողութիւնից, և նորա քանքարը կորչում է ի զուր, այն ինչ իմ հսկողութեան ներքոյ նա կարող կլինէր շօշափելի օգուտ և ծառայութիւն մատուցանիլ հայերին ազգային լուսաւորութեան գործում:

Վերոյիշեալը ենթարկելով Զերդ Կայսերական բարձրութեան բարեգութ վերահայեցողութեան, աղաջում եմ չզլանալ

միջնորդ հանդիսանալու թագաւոր-Կայսեր առաջ՝ պարզեցվուին ինձ վաթօնամեայ ծերունի Տէր-Գարբիէլ քահանայի կեանքի մնացորդը, հայցելով նորա համար կայսերական ողորմածութիւն և ամենողորմած ներումն և քահանայութեան աստիճանի վերադարձումն և իրաւունք տալով ինձ կարգելու նորան ըստ հանայ երևանի կամ Անդրկովկասի մի ուրիշ հայաբնակ տեղի եկեղեցիներից մէկում:

Այդ կայսերական ողորմածութիւնը ես կընդունեմ իբրև նշան առանձին հաճութեան դէպի ինձ և դէպի իմ ազգը:

Վերառաքելով առ բարձրեալն իմ ջերմեռանդ աղօթքները մարդասէր ու գթած թագաւոր-Կայսեր և բովանդակ օգոստափառ գերդաստանի բարօրութեան և արևշատութեան համար, պատիւ ունիմ մնալ Զերդ Կայսերութեան մեծութեան խոնարհ ծառայ ու ջերմեռանդ աղօթարար Մատթէոս պատրիարք-կաթողիկոս ամենայն Հայոց:

Ես թուղթը, որ զբուած է Կովկասի նախկին ժոխարքայ նորին Կայ-սէն. Ես թուղթը, որ զբուած է Կովկասի նախկին ժոխարքայ նորին 1863 թուին, մացել է փախարքայութեան Միլայիլ Նիկոլայիչին 1866-7 թուականները, երբ ներսէս Վարժապետանի Կայսեր անունով ուղարկած աղերսազրի հիման վերայ յարուցուել է Պատկանեանցին քահանայութիւնը վերադարձնելու խնդիրը, երբ «ինդիքներ ընդունելու յանձնաժողովը» իշխանութեան հրամանով գրադաւած է եղել Պատկանեանցի և նորա գրածի մասին տեղեկութիւններ հաւաքելու խնդրով, ի միջին այլոց, ուղարկում է յանձնաժողովին և այդ թուղթը, որ, անկասկած, ունեցել է իւր ներքութիւնը: Եյդ մասին տես մեր յօդուածը-սՄ. Նալբանդեանցի նորազիւս հնագոյն նամակների առթիւս, որ պագուցաւ «լումայ» ամսագրի 1 և 2 համարներում:

Թուղթը զբուած է ուստերէն, որից և մենք թարգմանեցինք հայերէն, Մեր ձեռքին եղածը թղթի պատճէններից միան մէկն է, որ մեզ յաջողեց գըտնել հանգ. Յարութիւն աղա Խալբեանի թղթերում: Օդաւում ենք դէպեից կըբեկին մեր շնորհակալութիւնը մատուցանելու Դ. Խօջայեանին, որ մեր արամագրութեան տակ գրեց իւր պատի թղթերը, իրաւունք տալով հարկաւոր դէպում օգտականութեանից մեր գրաւոր աշխատանքների համար:

b. ՇԱՀԱԶԻԶ